

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՅԻՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եղանակավորող բառերն ուսումնասիրվել են թե արտասահմանյան և թե խորհրդային լեզվաբանների կողմից, բայց առաջին անգամ այս բառերն առանձնացվել են որպես յուրահատուկ մի խումբ՝ մի ինքնուրույն խոսքի մաս, ռուս լեզվաբանների կողմից: Եղանակավորող բառերը մյուս լիմաստ խոսքի մասերի նման նախադասության անդամ չեն, բայց նրա մեջ մտնող մյուս խոսքի մասերի նման իրենց դերն ունեն նախադասության մտքի ձևավորման ու արտահայտման մեջ: Եղանակավորող բառերը չնայած քերականորեն կապված չեն նախադասությանը, բայց որոշակի դեր ունեն նախադասության մտքի ձևավորման և արտահայտման մեջ, որը խոսում է այն մասին, որ եղանակավորող բառերն իմաստային կապերով են կապված նախադասությանը կամ այն անդամին, որին լրացնելով համապատասխանաբար և որոշակի երանգ ու գունավորում են հաղորդում այդ նախադասությանը, կամ նրա այն անդամին, որին լրացնում են (հլղաթյան, էջ 7): Բառերի այս խումբն արտահայտում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն այն փաստի կամ գործողության նկատմամբ, որը ներկայացվում է խոսողի կողմից արտահայտված ասույթի մեջ: Եղանակավորող բառերն առանձնակի դիրք են գրավում նախադասության մեջ և այդ դիրքը պայմանավորված է այն զնահատականով, որ նրանք արտահայտում են ամբողջ նախադասության նկատմամբ: Օրինակ

1. The earth *rotates* round the sun.
2. *Certainly* the earth rotates round the sun.

Նախադասություն 1-ը սովորական մի ասույթ է, որը ներկայացնում է օբյեկտիվ իրականության այն իրական փաստը, որ երկիրը պտտվում է արեգակի շուրջ, ուստի այս նախադասության մեջ գործածվում է օբյեկտիվ եղանակավորություն արտահայտված սահմանական եղանակի ներկա անորիշ ժամանակաձևով, որտեղ միավորվում են նաև այլ քերականական կարգեր (դեմք, թիվ, սեռ, կերպ, ժամանակային հաջորդականություն, ժամանակ, եղանակ, հաստատում-ժխտում), որոնք հանդես են գալիս միասնաբար ստեղծելով մի ամբողջություն, քանի որ այս նախադասության մեջ բոլոր բառերը կապակցված են իրար հետ:

Նույն առդրական եղանակով կապակցված են նաև 2-րդ նախադասության բառերը, բայց, ի տերբերություն 1-ին նախադասության, 2-րդ նախադա-

սուրբյան մեջ գործածվում է *certainly* եղանակավորող բառը, որն իմաստաբանորեն որոշակիորեն տարբերակում է 2-րդ նախադասության բովանդակությունը առաջինից, քանի որ որոշ նոր երանգ ու գունավորում է հաղորդում նոր ասույթում ներկայացված մեզ արդեն հայտնի օբյեկտիվ իրականության փաստերից մեկին, և ավելի ուժեղացնում խոսողի վստահությունը ասույթում արտահայտված փաստի նկատմամբ, "այսինքն ստորոգումը ոչ միայն վերագրում է հատկանիշի առարկային, այլ այդ վերագրումը կատարում է ըստ խոսողի սուբյեկտիվ ընկալման, խոսողի տեսանկյունից, արտահայտում է նաև խոսողի վերաբերմունքը դեպի իրականության ներկայացվող փաստը, այսինքն հաստատման-ժխտմանը ծակադրվում է նաև եղանակավորման կարգը և ավելանում է նաև բառային եղանակավորություն, որոնք բոլորը հանդես են գալիս միասնաբար" (Խլղաթյան, էջ 7): Օբյեկտիվ եղանակավորությունը երկու նախադասություններում էլ արտահայտվում է սահմանական ներկա անորոշով, իսկ սուբյեկտիվ եղանակավորությունը՝ *certainly* եղանակավորող բառով, որը ընդգծված սուբյեկտիվ երանգավորում է տալիս նախադասությանը: Այս նախադասության մեջ ունենք կրկնակի եղանակավորություն արտահայտված եղանակավորության երկու տարբեր միջոցներով Ի Պ Ի վանդվան սա համարում է անցում օբյեկտիվից սուբյեկտիվին կամ օբյեկտիվ եղանակավորություն + սուբյեկտիվ եղանակավորություն: Հնարավոր է նաև հակառակ երևույթ՝ անցում սուբյեկտիվից օբյեկտիվին: Օրինակ՝

3. *Perhaps, timely he saw the picture of a man walking up around.*

4 "I don't mind, I've said my goodbyes". *Perhaps* I'm sounding cynical, but.

Այս ասույթներում *perhaps* եղանակավորող բառը՝ չլինելով նախադասության անդամ, արտահայտում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն ասույթների բովանդակությանը (որտեղ գործածվում է սահմանական անցյալ ժամանակածն (նախադասություն 3,4)) և անցում է կատարվում ոչ թե օբյեկտիվից սուբյեկտիվին (տես օրինակ1) այլ սուբյեկտիվից օբյեկտիվին՝ նախադասության բովանդակությանը տալով անվստահության, ենթադրության իմաստ: Երեք օրինակներում էլ (2, 3, 4) եղանակավորող բառերը գործածվում են սահմանական եղանակի ժամանակածների հետ (ներկա անորոշ, անցյալ անորոշ, ներկա շարունակական), որն եղանակավորության արտահայտման քերականական միջոց է:

Հնարավոր է նաև եղանակավորող բառերի գործածությունը թեք եղանակների հետ: Օրինակ՝

5. *He would be there.*

6. *Fortunately* he would be there.

7. *Sir, perhaps* I should answer you by another question and that would not become me.

Առաջին ասույթում՝ (օրինակ 5) սուբյեկտիվ եղանակավորության արտահայտման համար խոսողը գործածում է *would be* պայմանական եղանակով արտահայտած բայածեր, որն ենթադրություն կամ հավանականություն է արտահայտում այս ասույթի թվանդակությանը և նա դա իրականացնում է եղանակավորության քերականական միջոցի՝ քեր եղանակածներից մեկի գործածությամբ: Խոսողի այս սուբյեկտիվ վերաբերմունքը կրկնապատկվում է *fortunately* եղանակավորող բառի գործածությամբ՝ որով խոսողն իր ցանկալիությունն է արտահայտում ասույթի մտքի նկատմամբ: Եթե օրինակ 2-ում ունենք օբյեկտիվ եղանակավորություն + սուբյեկտիվ եղանակավորություն, ապա օրինակ 3-ում կրկնակի սուբյեկտիվ եղանակավորություն + օբյեկտիվ եղանակավորություն, իսկ օրինակ 5-ում կրկնակի անցում է կատարվում՝ սուբյեկտիվից՝ սուբյեկտիվին, որի իրականացման համար խոսողը գործածում է եղանակավորության երկու տարբեր միջոցներ՝ քերականական և բառային, որոնք արտահայտում են մտքի անհրաժեշտ, ցանկալի լինելը, որոնց իրականացմանը հավանաբար ինչ-որ հանգամանքներ են խանգարել: Այստեղից կարելի է եզրակացնել, որ միևնույն ասույթի մեջ եղանակավորության տարբեր միջոցներ կարող են գործածվել՝ օբյեկտիվ եղանակավորություն + սուբյեկտիվ եղանակավորություն կամ սուբյեկտիվ եղանակավորություն + սուբյեկտիվ եղանակավորություն՝ երկու դեպքում էլ ունենք կրկնակի եղանակավորության վառ դեպքեր:

Մյուս կողմից վերոհիշյալ ասույթներում եղանակավորող բառերը գործածվում են ներգործական սեռով պատմողական նախադասություններում, որն ասում է այն մասին, որ հնարավոր է մի կողմից կրկնակի եղանակավորություն՝ քերականական + բառային, ինչպես նաև եղանակավորող բառերի համատեղ գործածությունը ուղիղ և քեր եղանակածների հետ (սահմանական և պայմանական եղանակների հետ):

Եղանակավորող բառերի գործառնությունային առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանք կարող են գործածվել նաև ի պատասխան հարցական նախադասության և խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը կարող է արտահայտվել մեծամասամբ՝ գեղչված անդամով նախադասության գործածությամբ: Օրինակ՝

8. ... "They are leaving in a fortnight"

"Are they, indeed?"

Հաղորդակցական - գործառական տեսակետից խոսակցի պատասխան նախադասությունը, որն իրենից ներկայացնում է երկխոսության մի մասը, որտեղ խոսակիցն իր սուբյեկտիվ վերաբերմունքն է արտահայտում տեղեկություն տվող նախադասությանը, և, համատեքստից կախված, այդ սուբյեկտիվությունը կարող է արտահայտել թերահավատություն, զարմանք, կասկած կամ մեկ այլ իմաստ, որն արտահայտվում է *indeed* եղանակավորող բառի գործածությամբ, ինչպես նաև անջատական հարցի հնչերանգով, և երկու նախադասություններում էլ ունենք սահմանական եղանակի ժամանակաձևերով արտահայտված եղանակավորություն, որոնցից մեկում առկա է օբյեկտիվ + սուբյեկտիվ եղանակավորություն, իսկ մյուսում՝ սուբյեկտիվ + օբյեկտիվ եղանակավորություն:

Եղանակավորող բառերի գործառույթային մեկ այլ առանձնահատկություն է նրանց գործածությունը *yes/no* հաստատում/ժխտում արտահայտող բառ-նախադասությունների հետ, նորից արտահայտելու խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն ասույթի արտահայտած մտքի նկատմամբ: Օրինակ՝

9. "Do you see much of him?"

"Yes, *certainly*".

Certainly եղանակավորող բառը գործածվում է հարցական նախադասությանը տրվող պատասխանում, և կրկնակի անգամ հաստատում է այն միտքը, որն արտահայտված է հարցական նախադասության մեջ: Հարցական նախադասության մեջ եղանակավորությունն արտահայտված է սահմանական եղանակաձևով, որն եղանակավորության արտահայտման քերականական միջոց է, իսկ նրան տրվող պատասխան նախադասության մեջ կրկնակի եղանակավորություն է արտահայտված՝ մեկը *certainly* եղանակավորող բառի գործածությամբ, մյուսը՝ սահմանական եղանակաձևի օգնությամբ, որն ամբողջությամբ զեղչված է (*Yes, Certainly, I see much of him*)՝ եղանակավորության երկու միջոցներն էլ տարբեր են, մեկը՝ բառային, մյուսը՝ քերականական:

Երբեմն եղանակավորող բառերը կարող են գործածվել ոչ թե *yes/no* հաստատող/ժխտող բառերի հետ այլ պարզապես փոխարինել նրանց՝ գործածվել նրանց իմաստով:

10. "Were you dancing?"

"Of course, I was (=Yes, I was)"

Հաստատում արտահայտող պատասխան նախադասության մեջ, մեր կարծիքով, գործածվում է *of course* եղանակավորող բառը, ոչ թե վստահության երանգ արտահայտելու նպատակով, այլ պարզապես, ըստ մեզ, հանդես է գալիս որպես "Yes" հաստատական բառ - նախադասության հոմանիշ:

եղանակավորող բառերի մեկ այլ առանձնահատկություններից է, որ նրանք կարող են գործածվել որպես ինքնուրույն նախադասություն *yes/no*-ի նման: Սակայն ինչպես նշում է Ա. Իյիշը, *Yes/no* բառ նախադասությունները երբեք չեն փոխում իրենց կարգավիճակը (ստատուսը), մինչդեռ եղանակավորող բառերը կարող են հանդես գալ որպես նախադասություն՝ երկխոսություններում կամ էլ ներմուծող բառ-նախադասությունների մեջ:

Օրինակ "Are you sure you want to join me?"

"Absolutely!"

Հնարավոր է, որ այս օրինակում *yes*-ը ավելի թույլ է հնչում որպես պատասխան, քան *absolutely* եղանակավորող բառն իր գործածությամբ, և այդ է պատճառը, որ հեղինակը "Yes" հաստատող բառ-նախադասության փոխարեն գործածում է *absolutely* եղանակավորող բառը:

Եղանակավորող բառերի մեկ ուրիշ առանձնահատկություն է այն փաստը, որ անկախ նախադասության տիպից (պարզ, բարդ, բարդ համադասական, քե բարդ ստորադասական) միևնույն նախադասության մեջ կարող է գործածվել մեկից ավել եղանակավորող բառ: Օրինակ՝

Most people *consider* the books rather expensive *actually*.

Այս նախադասության մեջ *actually* եղանակավորող բառը գործածվում է պարզ նախադասության վերջում, ետադաս է՝ դիրքի առումով և միակն է՝ կրկնակի եղանակավորության տիպիկ օրինակ է: Մեկ այլ օրինակում՝

Indeed poetry *may deviate* from the norms of the language in other respects, *particularly* in word order.

Այս նախադասության մեջ ակնհայտորեն գործածվում են երկու եղանակավորող բառ՝ *indeed* և *particularly*. Նրանցից *indeed*-ը, որը դիրքով նախադաս է, վերաբերում է ամբողջ նախադասությանը, որի մտքի նկատմամբ խոսողն իր սուբյեկտիվ վերաբերմունքն է արտահայտում: Երկրորդ եղանակավորող բառը՝ *particularly* հեռու է կանգնած *indeed* եղանակավորող բառից, իր դիրքով ետադաս է և դրվում է *in word order* բառակապակցությունից առաջ և ավելի շատ նման է ուժեղացնող, սաստկացնող, շեշտող բառի, որն իմաստային առումով նոր երանգ չի տալիս այս բառակապակցությունը, այլ ավելի է հստակեցնում այն: Մյուս կողմից այս նույն նախադասության մեջ եղանակավորության արտահայտման երկու բառային միջոցից բացի առկա է եղանակավորող *may* բայը, որը հնարավորության իմաստ է արտահայտում: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ սուբյեկտիվ մտածողական եղանակավորում արտահայտելու համար լեզվում հաճախ գործածվում են եղանակավորության արտահայտման տարբեր միջոցներ միևնույն նախադասության մեջ՝ քերականական (եղանա-

կածնի գործածությունը), բառային (եղանակավորող բառի գործածությունը), բառաքերականական (եղանակավորող բայի գործածությունը) միջոցների համատեղ գործածությունը, որը բերում է բազմանշանակավորության միևնույն նախադասության շրջանակներում: Հաղորդակցական գործառական տեսակետից շատ կարևոր է նախադասության՝ ինչպես բառային, այնպես էլ կառուցվածքային կազմը: Բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ հնարավոր է բազմանշանակավորություն, որի արտահայտման մի միջոցը չի բացառում մյուսի առկայությունը, անկախ միջոցի տիպից (բառային, բառաքերականական թե քերականական): Շարահյուսական իմաստներն իրար նկատմամբ կարող են նախ և առաջ համատեղելիության և ոչ համատեղելիության հարաբերությունների մեջ լինել, որտեղ գերիշխում է իմաստներից մեկը և չեզոքացնում կամ երկրորդական պլան է մղում ուրիշ իմաստներ: Այդ գերիշխող իմաստն էլ, ըստ Պառնասյանի, հիմք է հանդիսանում համանիշության համար (Պառնասյան, էջ 36): Իմաստային կառուցվածքը «օբյեկտիվ և սուբյեկտիվ ամենատարբեր հարաբերությունների ամբողջություն է, որոնք հաճախ ստորակարգվում են իրար, մակաշերտվում մեկը մյուսի վրա, իսկ հանդես գալիս միաձուլված՝ կազմելով մի բարդ համակարգ» (Պառնասյան, էջ 36):

Որոշ լեզվաբաններ (Լաբովը, Լակոֆը և ուրիշներ) եղանակավորող բառերի գործածությունը կապում են սեռի (գենդերի) հետ և այն միտքն են առաջ քաշում, որ կանայք ավելի հաճախակի են գործածում եղանակավորող բառեր, քան տղամարդիկ (Labov, Lakoff): Եղանակավորող բառերից՝ նրանք հատկապես առանձնացնում են *perhaps* և *maybe* եղանակավորող բառերի գործածությունը, որոնք խոսքում քիչ կամ ոչ լիարժեք համոզվածության իմաստ են արտահայտում՝ ի տարբերություն ոչ եղանակավորող բառերի:

Ելնելով բերված օրինակների վերլուծությունից կարելի է հանգել նաև մեկ այլ եզրակացության՝ եղանակավորող բառերը կարող են գործածվել ինչպես՝

1. պատմողական, այնպես էլ հարցական նախադասություններում, որպես այդ նախադասության միտքը սուբյեկտիվորեն բնութագրող բառ կամ որպես ինքնուրույն նախադասություն,

2. մի եղանակավորող միջոցի առկայությունը չի բացառում մեկ ուրիշ միջոցի գործածությունը,

3. մի եղանակավորող բառի գործածությունը չի բացառում մեկ ուրիշ եղանակավորող բառի գործածությունը,

4. հնարավոր է բազմանշանակավորության առկայություն մեկ նախադասության շրջանակներում,

5. հմարավոր է քերականական, բառային, բառաքերականական միջոցների համատեղ գործածություն, այսինքն՝ հմարավոր է տարբեր եղանակաձևերի, եղանակավորող բառերի և եղանակավորող բայերի համատեղ գործածություն,

6. հմարավոր է ինչպես ուղիղ, այնպես էլ թեք եղանակաձևերի համատեղ գործածությունը եղանակավորության այլ միջոցների հետ,

7. հմարավոր է օբյեկտիվ և սուբյեկտիվ եղանակավորության առկայություն միևնույն նախադասության մեջ,

8. հմարավոր է սուբյեկտիվ + սուբյեկտիվ եղանակավորության համատեղ գործածություն,

9. հմարավոր է եղանակավորող միջոցների գործածությունը, թե պարզ, թե բարդ նախադասություններում, ինչպես նաև հաստատական ու հարցական նախադասություններում:

Գրականության ցանկ

1. Ilyish B. A. The structure of Modern English, 1971, p. 164
2. Labov W. Language and Women's place. New York: Harper & Row. 1972
3. Lakoff, Back to Top, New York: Harper.
4. Quirk R. Greenbaum S. Leech G., Svartvik Y. A Comprehensive Grammar of the English Language, Longman, 1985, p. 20
5. Иванова И. П., Бурлакова В. В., Почепцов Г. Г. Теоретическая грамматика современного английского языка М. 1967 С 202
6. Мхитарян Е. О статусе и составе модальных слов в современном английском языке. Ереван 1989
7. Պառնապյան Ս. Նախադասության կարգերը, Երևան, 1974
8. Խլղաթյան Ֆ. Ժամանակակից հայոց լեզու, Երևան՝ 2010
9. Internet www.palcom.ox.ac.uk